



Մամուլի հաղորդագրություն
Ապրիլի 2, 2014թ.

«Միջազգային քրեական դատարանի համար» Կոալիցիան կոչ է անում Հայաստանին սահմանադրական փոփոխություն կատարել, որը թույլ կտա վավերացնել Հռոմի կանոնադրությունը և միանալ ՄՔԴ-ին՝ զոհերի համար արդարադատություն ապահովելու նպատակով:

«Հայաստանը կարող է իր հարգանքի տուրքը մատուցել նախկինում կատարված վայրագությունների զոհերի հիշատակին և ապահովել ապագա սերունդների պաշտպանությունը օրենքի գերակայության միջոցով՝ միանալով Միջազգային քրեական դատարանին (ՄՔԴ)», - ասում է «Միջազգային քրեական դատարանի համար» կոալիցիան:

Սույն թվականի ապրիլ ամսին Կոալիցիայի՝ Համընդհանուր արդարադատությանն ուղղված քարոզարշավի կենտրոնում Հայաստանն է: Կոալիցիան կոչ է անում պետություններին վավերացնել Հռոմի կանոնադրությունը, որի հիման վրա ստեղծվել է միակ մշտական հիմունքներով գործող միջազգային դատարանը, որն իրավասու է քրեական արդարադատություն իրականացնել առանձնապես ծանր հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ:

«Միջազգային արդարադատության մեխանիզմները, որոնցից է Միջազգային քրեական դատարանը, ձգտում են արձանագրել պատմական իրադարձություններն, ինչպիսիք են ցեղասպանությունը, մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, պատերազմական հանցագործությունները: Մինևույն ժամանակ, դրանք կարող են կանխել նման հանցագործությունների կրկնությունը,- ասում է Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ ներկայացուցիչ Տաթևիկ Ղարիբյանը և հավելում: -Մենք հույս ունենք, որ մեր կառավարությունը հնարավորինս շուտ կվավերացնի Հռոմի կանոնադրությունը: Հայաստանն ՄՔԴ-ին իր անդամակցությամբ հարգանքի տուրք կմատուցի անցյալի զոհերի հիշատակին և կնպաստի ապագայում նոր հնարավոր զոհերի կանխմանը»:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին ուղղված նամակում Կոալիցիան կոչ է անում Հայաստանին անհրաժեշտ քայլեր ձեռնարկել՝ միանալու 122 այլ պետություններին, որոնք ՄՔԴ-ի անդամ են և աջակցել անպատժելիության վերացմանը:

Չնայած Հայաստանը ստորագրել է Հռոմի կանոնադրությունը 1999թ.-ին, սակայն ՀՀ Սահմանադրական դատարանը 2004թ.-ին որոշում է կայացրել, որ այն չի համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը:

CONTACTS

In The Hague:

Kirsten Meerschaert Duchens
Head of the Hague Secretariat,
Regional Coordinator for Europe
Coalition for the ICC
Tel: +31 70 311 1087

meerschaert@coalitionfortheicc.org

g

Niall Matthews

Head of Communications
Coalition for the ICC
Tel: +31 70 311 1085

matthews@coalitionfortheicc.org

In New York:

Jelena Pia-Comella
Program Director
Coalition for the ICC
Tel: +1 (646) 465-8524

pia@coalitionfortheicc.org



«Տասը տարի է անցել ՀՀ Սահմանադրական դատարանի՝ Հռոմի կանոնադրության անհամապատասխանության մասին որոշումից հետո: Մեկ տասնամյակ է, ինչ Հայաստանը, ցավոք, դուրս է մնացել միջազգային արդարադատության համակարգի կառուցակարգի մշակման գործընթացից, որը նպատակ է հետապնդում ճանաչել զանգվածային վայրագությունների զոհերի տառապանքները և փոխհատուցում տրամադրել»,- **ասում է Քիրատեն Միերսբերթ Դուխենսը, Կոալիցիայի՝ Եվրոպական տարածաշրջանի համակարգողը:**

Անցած տարի Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողով է ստեղծվել՝ ՀՀ Սահմանադրության փոփոխություններ մշակելու նպատակով:

«Ներկայումս իրականացվող Սահմանադրական բարեփոխումները երկար սպասված հնարավորություն են Կառավարության համար կատարելու այնպիսի փոփոխություններ, որոնք թույլ կտան վավերացնել կանոնադրությունը, և մենք ակնկալում ենք նման նախագիծ»,- հավելում է **Միերսբերթ Դուխենսը:**

Հավելյալ տեղեկություններ.

Միջազգային քրեական դատարանն առաջին մշտական հիմունքներով գործող դատարանն է, որը քրեական արդարադատություն է իրականացնում պատերազմական հանցագործությունների, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և ցեղասպանության համար: Դատարանի իրավագործության հիմքում ընկած է լրացման սկզբունքը, որի համաձայն՝ Դատարանն իրավասու է արդարադատություն իրականացնել միայն այն դեպքում, երբ տվյալ պետությունն ի վիճակի չէ կամ չի ցանկանում պատերազմական հանցագործությունների, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և ցեղասպանության առնչությամբ իրականացնել քրեական հետապնդում:

«Միջազգային քրեական դատարանի համար» Կոալիցիան 150 երկրների հասարակական կազմակերպությունների համընդհանուր ցանց է, որը նպատակ է հետապնդում ամրապնդել ՄԲԴ-ի հետ միջազգային համագործակցությունը, ապահովել, որ Դատարանը գործի արդար, արդյունավետ և անկախ, իրականացնի տեսանելի և համընդհանուր արդարադատություն: Կոալիցիան նաև խթանում է ներպետական ավելի խիստ օրենքների առաջընթացումը, որոնք արդարադատություն են ապահովում պատերազմական հանցագործությունների, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և ցեղասպանության զոհերին: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել www.coalitionfortheicc.org: